

րի ու դուրսորդների մէջ, բայց դրանով դառնում է ծաղրի առարկայ, իւրաքանչիւր ոք իր սրբազան պարտքն է համարում նրա պարծենկոտութեան մասին պատմել և մի կուշտ ծիծաղել:

Վերջապէս ենք մեր խօսքը յայտնելով մեր խորին չորհրակալութիւնը Գետաբէկում ծառայող պ. Ն. Գորոսեանին, որը, պէտք է ասել, մեծ եռանդով աշխատել է և աշխատում է այս գործի պարզելու համար և ձեռք է բերել բազմաթիւ կեղծ տոմսակներ, որոնք կրում են Վանան վարդապետի ստորագրութիւնը և որոնց մէջ ոչ գին է յայտնած և ոչ էլ ժամանակ:

Ստ. Մանասեան

ՆԱՄԱԿ ՀԱՐՈՒՐԻ ԳԱԽԱՌԻՑ

Խանութար, մայիսի 30-ին

Մեր մահալի խաղերի այգիները և պողատու ծառերը այս տարի իրանց առատ բերքով անցնել տարվայ հալածակների են ներկայացնում: Անցելով տարի մայիս ամսում մեր գիւղացիները իրանց ցրտահար եղած այգիները գնալ անգամ չէին ուղարկել այս տարի, ընդհակառակը, միշտ այգում են և շատ ունակ են: Լաւ են այս տարի նոյնպէս բամբակի և չալթուկի (բրինձ) բոյսերը, որոնք առատ բերք են խոտանում: Ջուրն առ այժմ շատ առատ է, ամբողջ ջրի կէտից շատը դէպքի Արաքսն է գնում: Ուրախ են գիւղացիները այս տարի, բայց աւելի ուրախ են գինեւորում պահողները և ճոթաւորները:

Համարձման օրը վեց հոգի խանութարացի գիւղացիներ 24 բուրջի գինու և գարեջրի էին տուել և 11 բուրջի էլ այլ ծախսեր էին ունեցել: Հետեւել օրը՝ ծախսերը հաշուելու, կուր էին բռնվել և գործը հասցրել էին գիւղական դատարանին: Բացի այդ, թղթախաղով են պարագայում շատերը խանութներում և գիւղերում գինեւորում: Այդ ախտով վարակվել են նաև դպրոցի աշակերտներին մի քանիսը:

Այսպէս ըստ հայ գիւղերում շատ տաք բաժնի է արծաթի գոտի կրելը: Թէ աղամարդիկ և թէ կանայք կրում են արծաթէ գոտիներ, իսկ կանայք, բացի գոտիներից, կրում են և ոսկիներ: Միայն Խանութարում մօտ 5,000 բուրջու արծաթ գոտիներ և ոսկիներ կան, ուրեմն խանութարացիները տարեկան 500 բուրջուց աւելի տոկոսներ կորցնում են: Իսկ շատերը գոտի կորցնելից ծանր պարտքերի լակ են և շատերն էլ բամբակի փող են առնում (կորեզով բամբակի պողը այժմեանից ծախում են 1 բ. 50 կ., 1 բ. 60 կ., ամենամեծը 2 բուրջով), որպէս զի այնքան բամբակ տան: Անցնալ տարի դեկտեմբեր ամսում կորեզով բամբակի պողը ծախվում էր 3 բուրջի, ուրեմն 5—6 ամսվայ համար գիւղացին տալիս է 2 բուրջուն մէկ բուրջի տուկոս և դեռ աւելի:

Այստեղ տոկոսով փող տուողներ շատ սակաւ են, իսկ եղած դէպքում 60%օ-ից պակաս չեն համաձայնել տալ և այն էլ հազար նոգ ու թուղթի ծրը են արդեօք ազատվելու գիւղացիները իրանց մոլութիւններից և վախառու դաղանների ձեռքից:

Ս. Յովնանեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 24-ին

Թիֆլիսի բնակիչների մի ստուար դասակարգ ամենադժգոյշ վիճակի մէջ է: Խոսքը ամենապարզ հիմնարկութիւնների և խանութների գործակալատների և ծառայողների մասին է, որոնց թիւը հասնում է քանի մի հազարների:

Զնչին ոտնիկներ, անապանով ապաքայ, 14—18 ժամվայ չարչարանք, ստրկական վիճակ և ինչ հետեւանք այդ բոլորի—քաղաքում առողջութիւն և զուրկ ընտանեկան չըլանի միութեամբ կենանք:

Մեր մասնը առօրեայ հարցերի ցուցակից դժբաղդաբար հանել է այս ամենախուրջ և ամենախորհրդաւոր հարցը:

Դիմելով պ. քաղաքապետին և խնդրելով այդ հարցի մասին իմ գեղեցումը (պատճեններ ներկայացնում եմ ձեզ) առաջարկել պ. պ. իրաւասուններին—գիւրմուս եմ ձեզ յարգելի խմբագիր, խնդրելով ձեր յարգելի թերթում պատանի հանդիսանալ այդ դժբաղդ դասակարգի շահերին և ձեր թերթի միջոցով առաջարկել միջոցներ ըստ հարաւորութեան հեղացնել նրանց վիճակը:

Այդ միջոցների ամենաառաջին տեղը պիտի բռնէ աշխատանքի ժամերը սահմանափակել օրեկան ոչ աւել 8 ժամից:

Ստ. Խր. Սուլիսեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Կարս, մայիսի 26-ին

«Մշակի» № 105-ում մի թղթակցութիւն էր տպւած Կարսից: Այդ թղթակցութեան մէջ Ն. Նորատեանը մեր յայտնի դերասանուհի տիկին Սիրանոյի առաջին ներկայացումը նկարագրելուց յետոյ, աւելացնում է. «Ներկայացման ժամանակ մի աչքի ընկնող նորութիւն կար, այդ աչք է, որ ժողովարանի պարտիզան անգամ, կառավարիչ և դանձապահ» պ. Յովնանէսեանը, խրատվելով անցնել անգամայն դանիճից հետաքրքրուց, որ եկել էր առանց տոմսակի, այս անգամ իր համար յատուկ բազկաթոռ էր դնել տուել «кредито старшина-хозяина собрания» վերտառութեամբ: Կարծես աս այնպիսի մի նորութիւն է, որ թէև կրէնների կեանքում առաջինն է, բայց ուրիշ տեղեր էլ օրինակ վերցնել կարող են. և պատուաւոր է, և որ գլխաւորն է ձեռնառում:

Գ. Նորատեանի թղթակցութեան այդ մասը, որ վերաբերում է ինձ, սկզբից մինչև վերջը սուտ է: Նախ ոչ ոք և երբեք ինձ չէ հետաքրքրել, և չէր էլ կարող հետաքրքրել ժողովարանի դանիճից: Երկրորդ, սուտ է նոյն իսկ այն, իբր թէ ես առաջին անգամ բազկաթոռ եմ դնել տուել ինձ համար մայիսի 15-ին տիկին Սիրանոյի ներկայացմանը:

Երրու տարուց ի վեր ես Կարսի հասարակական ժողովարանի անդամ եմ, իսկ անցնալ 1902 թ. հոկտեմբերի 12-ին իմ պաշտօնակից աւագները ընտրեցին ինձ անօրէն—աւագ (старшина-хозяин), որ ժողովարանի կառավարիչն է և զանազապէս և այդ օրից սկսած թէ հայոց և թէ ռուսաց բոլոր ներկայացուցիչների ժամանակ դրված է լինում բազկաթոռ ինձ համար, որովհետև ամեն մի ներկայացման ժամանակ ես հերթապահ եմ լինում և իմ ներկայութիւնը թէ դանիճում և թէ ժողովարանի միւս սենեակներում անհրաժեշտ է, որովհետև ժողովարանի սենեակների անյարմարութիւնների և առանձնապէս դանիճի և բեմի պակասութիւնների չորհրդի ամեն րօպէ թէ հանդիսականներից և թէ դերասաններից դիմում են ինձ, խնդրելով այս կամ այն կարգադրութիւն անել:

Գ. Նորատեանը գտնում է թէ «старшина»-ի համար բազկաթոռ դնելը նորութիւն է կրէնների կեանքում: Նրան ներելի է այդ, որովհետև նա երբեք չէ տեսել որից քաղաքների կրէններն և չէ իմանում, որ իսկ ընդունված սովորութիւն է կրէններից շատերում, ինչպէս, օրինակ, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան մէջ, որի թատերական դանիճում կայ մշակական բազկաթոռ հերթապահ—աւագ (дежурный старшина) վերտառութեամբ:

Ինչ վերաբերում է Հ. Նորատեանի այն ակնարկին, թէ ձեր բազկաթոռն ունենալը ինձ համար ձեռնառն է, կարող եմ այդքանը միայն ասել, որ հէնց միմիայն տիկ. Սիրանոյի երեք ներկայացումներին ես իմ ընտանիքի համար առել եմ 23 ր. 70 կ. տոմսակ (ինչպէս կարող են վկայել տիկ. Սիրանոյն և միւս դերասանները):

«Մշակի» ընթերցողների համար կարող է անհասկանալի լինել, թէ ինչու պէտք է Հ. Նորատեանը այդպիսի սուտ լուր հաղորդէր իմ մասին: Որպէս զի այդ էլ հասկանալի լինի, յիշենք իմ ընթերցողներին իմ նամակը, որը տպւած էր «Մշակում» Հ. Նորատեանի մասին և աւելացնում է, որ ես նրա աչքին փռել եմ դառն այն օրից, երբ պահանջել եմ բոլորովին հետաքրքրել նրան մեր ժողովարանից այն պատճառով, որ նա թոյլ էր տուել իրան ներս մտնել վերաբերուն հագած, գլխաւոր զլինել և կրկնաօչիկները ոտքերին ժողովարանի այն սենեակը, ուր նախագահաւոր, նրա օգնականը, գաւառականներ և ժողովարանի ուրիշ անդամները նստած թուղթ էին խաղում և չէ նայելով որ բոլորը ապշած նրան էին նայում, այդ պատճառով շատ անգիտա կերպով, նոյն հագուստով անցնելով նախագահաւորի մօտից՝ գնաց միւս սենեակները:

Ահա թէ ինչի մէջն է գաղտնիքը: Ք. Ս. Այն թերթերի խմբագիրներին, որոնք արտասպառել են Հ. Նորատեանի հաղորդած լուրը, խնդրում եմ արտասպառել նաև իմ այս հերքումը:

Ա. Յովնանէսեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Քեյհիքեանդ (Ալեք. Գաւա), յունիսի 7-ին
Անցնալ մայիսի 22-ին վախճանվեց գիւղի ծխատէր Գրիգոր քահանայ Սիրապետի կիներ՝ Գայանէն: Հանգուցեալը մեռնելուց մի օր առաջ նուիրեց 10 բուրջի մեր նորակառուց եկեղեցուն, որը բոլորովին զուրկ է անթիղէսներից: չէ նայելով որ ճանգուցեալը գտնվում էր աղքատ դրութեան մէջ, պատուիրեց թէ իր որդեգր և թէ իրան այցելող բարեկամներին, որ այսուհետև նմանեալների ճիւղերին փոխարէն, որի վրա ծախվում է ամենաթէր 15—20 բուրջի, կարող են դրամական օգնութիւն հասցնել բարեգործական նպատակների համար: Բաւական և առաջին անգամ է մի բարի օրինակ հանգուցեալի կողմից, որը պատճառ դարձաւ մեր աղքատ գիւղի ժողովրդի ճիւղերին և ճիւղերի վերաբերեալ բամբասանքների վերանալուն:

Եկեղեցու շինութեան հոգաբարձութիւն

ստացաւ նուէր պ. Մինաս Թարութեանից 15 բուրջու արժողութեամբ մի վարագոյր: Նոյնպէս 1 բուրջի Արշակ Օհանեանից: Թայտնում ենք պ. պ. նուիրատուներին մեր չորհրդակալութիւնը:

Հոգաբարձու Թարութեան Սիրապետ

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Կօջօր, յունիսի 4-ին

«Մշակի» անցնալ տարվայ № 249-ում «Մխալան» և այս տարվայ № 19-ում Թարութեան քահանայ Զուղուրեանի հրապարակ էին եկել պաշտպանելու Թիֆլիսի Թանգույանի եկեղեցու նախկին դռնապան Գ. Գալաշեանին, որ իբր թէ ես նրան չորս ամիս մշակութեան վարձ և մի ամսվայ ոտնիկ:

Ժիշդ նոյն իմաստով Գալաշեանը բողոքել էր թէ Վեհափառին և թէ Թիֆլիսի 3-րդ քաղաքապետի հայտարար դատաւորին և պահանջում էր ինձանից 3 ամսվայ մշակութեան վարձ և մի ամսվայ ոտնիկ:

Չը նայած հայր Զուղուրեանի դատարանում հասարակութեան առաջ ծիծաղ և ցաւ պատճառող ցուցմունքին, ի նպատակ Գալաշեանի, պ. դատաւորը, անհիմն համարելով քահանայի ցուցմունքը և Գալաշեանի պահանջը սարքովի, անցնալ ապրիլ ամսի 26-ին մերժեց այդ պահանջը, բացի ոտնիկից, որի մասին «Մշակի» № 53-ում յայտնել էի, որ դռնապանը չէ ստացել և չէ ցանկանում ստանալ մի ամսվայ ոտնիկը:

Երեցիքի՛ն Խ. Տէր-Սարգսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Այս ամսի վերջին Կովկաս կայսրին մի խումբ ֆրանսիական ռուստոյներ, որոնք, ի միջի այլոց, կը գնան տեսնելու նաև Կովկասեան հանգային ջրերը:

Երէկ, յունիսի 10-ին, տեղի ունեցաւ հայ-վրացական արձանագրութիւնների հրատարակութեան մասնաժողովի առաջին նիստը, պրօֆէսոր Մարիկ Նախագահութեամբ: Ժողովին մասնակցում էին 15 հոգի, որոնց մէջ կային զանազան տեղից եկած անձեր: Մարիկ ծանօթացրեց ժողովականներին մասնաժողովի առաջիկայ գործունէութեան ծրագրի հետ Վաղվայ համարում մենք կը տանք մանրամասն տեղեկութիւն ժողովի պարագաների մասին:

Վերջին յորդ անձրների պատճառով Անդրկովկասեան երկրորդու և Վաղիկավկազի գծերի վնասված տեղերը արդէն ուղղված են և գնացողների երթևեկութիւնը սկսված:

Թիֆլիսի քաղաքային ուղարկման, մօտ օրերում վերջացնելով Թիֆլիսի այս տարվայ ելմուտքի նախաձեռնի կազմութիւնը, յանձնեց ֆինանսական մասնաժողովի զննութեան Ուղարկման կազմած նախաձեռնող, քաղաքը այս տարի պէտք է ունենար 1,430,483 բուրջի մուտք, իսկ ծախք—1,559,541 բուրջի: Յիշատակական մասնաժողովը, զննելով նախաձեռնողը, գուրա ձգեց նախաձեռնից ծախքի մի քանի յօդուածներ և դրանով ծախքի գումարը հասարակացրեց մուտքի գումարին: Նախաձեռնողը գումարի զննութեան կը ներկայացնէ յունիսի 16-ին:

«Ноб. Обозр.» լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսում պօլիտեխնիկում բանալու հարցը կը վճարի Վեհաբարձութեան այս տարվայ աշխատանք:

«Каспий» լրագրում տպագրված է Զ. Թաղիբի հետեւալ նամակը, որ վերաբերում է Աւաքի Մատուրեանի մահվան. «Վերջին օրերում Բազում տարածված են լուրեր, թէ իբր իմ քառամասնալ բարեկամական յարաբերութիւնները հանգուցեալ Մատուրեանի հետ փոխվեցին նրա յանկարծական մահվանից առաջ, որ տեղի ունեցաւ Երևանի նահանգի Արդաբանդ կառավարչութեան Իրան հերքումը այդ լուրերին, որոնք տարածվում են իմ թշնամիների կողմից: յայտնվում եմ, որ իմ բարեկամական յարաբերութիւնները հանգուցեալ Աւաքի Մատուրեանի հետ, ինչպէս և նրա յարաբերութիւնները ինձ հետ մինչև նրա մահվան օրը՝ ամենակին չեն փոխվել դէպքի վտար և ես այժմ հոգեպէս ցաւում եմ նրա մահվան համար: Իրեն ապացոյց այն բանի, որ մեր յարաբերութիւնները չեն փոփոխվել, կարող են ծառայել մայիսի 24-ին և 25-ին, այսինքն Ա. Մատուրեանի մահվան նախընթաց օրը միմեանց հետ փոխանակած հեռագիրները, ու

որոնց պատճենները ուղարկելով՝ խնդրում եմ տպագրել: Թաղիբի հետագիւր, որ ուղարկել է նա Ա. Մատուրեանին մայիսի 24-ին, հետեւեալն է. «Վերջին ձեր հոգու մօտայ յարաբերութեան մասին ինձ՝ որպէս ձեր բարեկամի՝ շատ վշտացրին. այդպիսի յուսահատութեան անձնատուր լինելը խելացի չէ և անօգուտ: Մարդը չը պէտք է անգամանքների գերի լինի: Դա մեծ ամօթ է մարդու համար, որովհետև անգամանքների դէմ մաքառելու համար Աստուած մեզ խելք է տուել: Ձեր անմիտ վարմունքի համար ամբողջ աշխարհը կը դատապարտէ ձեզ: Դուք անյնչեղի բեծ կը գործէիք դրանով ձեր ամբողջ ընտանիքի վրա, չնչին բանի համար փոքրագութիւն ցոյց տալով: Եթէ դուք մօտեկից նայէք ուրիշ մարդկանց վշտերին, կը տեսնէք, որ ձեր վիշտը, համեմատաբար, չնչին է և ձեզ իրաւունք չէ տալիս յուսահատվելու: Դուք, երբի, մոռացել էք իմ խօսքերը, որ ես ձեզ ասացի, երբ դուք գիմեցեք ինձ օգնութիւն խնդրելու: Խնդրում եմ ձեզ, իբրեք բարեկամի, զալ անյապաղ ինձ մօտ՝ սրտանց իրար հետ խօսելու համար: Եթէ դուք չը կատարէք այս՝ ես մեր աւելի քան քառամասնալ բարեկամութիւնից դրդված չը նայելով իմ տկարութեան և ժամանակի օգնութեան, ստիպված պէտք է լինեմ ուղեւորվել ձեզ մօտ, հէնց որ էմիրին ճանապարհ գցել, ամսի 1-ից յետոյ: Հեռագրեցէք. պատասխանին սպասում եմ անհամբերութեամբ: Թաղիբի Ա. Մատուրեանը պատասխանել է Թաղիբին հետեւալ հեռագրով. «Որդի կերպով զգածված եմ ձեր հեռագրով: Խնդրում եմ չանհանգստանալ. յուսահատ եմ մահվան թերին կը լինեմ Բազում: Դուք չունեցէք իմ անկեղծ չորհրակալութիւնս և ողջնայ»:

ԵԻՐԱՅԻՑ (Ալեքսանդրապօլի գաւառ) մեզ գրում են. «Տիրապալի կաթօլիկական թեմի եպիսկոպոս բարոն Բօսպ մայիսի 24-ին այցելեց նաև Մուսուլլի և Զիթեանցի գիւղերը, ուղեկցութեամբ բազմաթիւ կաթօլիկ և լուսաւորական հայ ժողովուրդի: Գերապալաւ եպիսկոպոս Զիթեանցիով կաթօլիկների եկեղեցում (գիւղում կան և լուսաւորականներ իրանց եկեղեցիով) մի համաժողով քաղաքացիներից և ժողովուրդին ալ տալուց յետոյ, ճաշի հրաւիրվեց կաթօլիկները ծխական քահանայ իշամիրեանիցի կողմից, որին մասնակից եղան եպիսկոպոսի ավիտայի հետ նաև մի քանիսն և երկու պրիստաւ: Այնուհետև, ճանապարհ ընկաւ նոյն օրը Լըւրն և Փոքր-Ղարաքիլիսս գիւղերով դէպի Ալեքսանդրապօլ:

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Ամսի 2-ին, երեկոյան ժամը 6-ին, եկաւ կարկուտ, բայց անձրեկ հետ լինելով՝ վնաս չը պատճառեց այգիներին և բուսականութեանը: Կայծալը սպանել է մի թուրք կնոջ կող կթելիս և հորթին էլ մէկից կէս է արել: ՂԶԼարի չըլակայքում այս տարի պէտք է ունենար 1,430,483 բուրջի մուտք, իսկ ծախք—1,559,541 բուրջի: Յիշատակական մասնաժողովը, զննելով նախաձեռնողը, գուրա ձգեց նախաձեռնից ծախքի մի քանի յօդուածներ և դրանով ծախքի գումարը հասարակացրեց մուտքի գումարին: Նախաձեռնողը գումարի զննութեան կը ներկայացնէ յունիսի 16-ին:

ԵԻՐԱՅԻՑԻՆՈՒՐԻՑ մեզ գրում են. «Այստեղ էր դերասան Ստեփանեանը Զարիֆեանի հետ. նրանք մի կերպ աղողեցին մի ներկայացում: Խորհուրդ ենք տալիս մեր զգաւորներին չը կերակրել հայ գաղութները եւրոպական հեղինակութիւններով, այն էլ անաւանելի թերութիւններով: մենք կարօտ ենք ազգային պիեսների, օտարին մենք հնարաւորութիւն ունենք տեսնել օտար բեմի վրա և զեղեցիկ, օրինակելի կատարումով: Ներկայացման քիչ հասարակութիւն կար. ամառը այստեղ դժուար է ներկայացումներ աշողացնել: Հասարակութեան անաւանութիւնը վերաբերում ենք նաև պիեսների անաւոյ ընտրութեանը:

ԳԵՏԱՐԵԻՑ (Գանձակի գաւառ) մեզ գրում են հետեւալը. «Ինչպէս ձեռք ձեռնալատ էր, այնպէս էլ գարունն է անձրեկալատ: Օրը չէ անցնում, որ անձրեկ կամ մանր կարկուտ չը գայ: Այդ անձրեկները բաւական լաւ էին ազդում ցանքերի վրա: Դեռ այնքան ցանքերը մեծ յոյսեր էին տալիս. դժբաղդաբար յունիսի 1-ին տեղաց անձրեկալատն օտարիկ կարկուտ և փչացրեց Սլաւանակ և Փիւ գիւղերը: Գիւղացիները մեծ մասը Հէղեղն էլ է բաւական վնասներ հասցրել: այսպէս՝ դուրսբորներից տարել է 3 կով, քանդել է մի կաւմուր, ջրով լցրել է մի ջրաղաց, որից տարել է բաւականաչափ ալիւր և փչացրել է բան

Հարանոցները Հեղեղը Մոսկու գիւղի հնձած համալսարանը, թէ նա միշտ ջերմ պաշտպան է իր ժողովրդի հանդէսը, ինչպէս զուտ ժողովրդական շահերի ու իրաւունքների, այն ժամանակ կարելի է երթալ ինքեղել է մի քանի շնորհ և գայլերու Յունիսի գրել, որ բարեբար փոփոխութիւն է կրելու 3-ին և 4-ին կրկին կարկուտ եկաւ, բայց այս Սերբիայի կեանքը, բարեբար՝ թէ կուտուրաւ, կան է թէ զուտ անտեսական տեսակէտից Գրաւաւաւաւ գրաւակներ կարող է լինել կուտուրաւ վարուելու նոր կազմը, որը և յիշատակու թեան կազմակերպողն էր նրա բոլոր անդամները պատկանում են առաջադիմական և արեւմտական կուտակցութիւններին Անա գրանց անունները:

ԿԱՐՍԻԵ մեզ գրում են. «Կարսի լիւրճի արեւմտական Ռոսիայի 26-ին երեկոյան զարեւել ճանապարհ ընկաւ դէպի Ալեքսանդրոպոլ Ողջութիւն մաղթելու համար կայարանում հաւաքված էին պատուաւոր դասակարգից երկսեռ խումբ բազմութիւն, պաշտօնեաներ և պ. նահանգապետը: Բոլորի աշտանդ ժամանած օրը իր օվիտայով միասին ընդհանուր ճաշ տրվեց քաղաքային ամառային ժողովարանում օտարազգի պաշտօնեաների և միջազգային զաւարթացի հայ-կաթոլիկներ կողմից: Զաւարթացի ճաշի օրինակներ և տիկիններ: Հրաւիրված էին պ. նահանգապետը և իշխան ոստիկանապետը. ընդամենը 40 հոգի: Նուագում էր ճաշին զինուորական օրկեստրը: Կենացները միջոցին արեւմտական ջերմ շնորհակալութիւն յայտնեց տեղի հայ-կաթոլիկ հասարակութեան իրանց անկեղծ ընդունակութեան համար և յայտնեց, որ նրանց գտնում է շատ աւելի պայծառ գրութեան մէջ, քան մինչև այսօր Կովկասում իր տեսած ուրիշ կաթոլիկ համայնքները և առանձնապէս ուրախ է, որ գտնէ մի համեմատ ուսումնասիրան են պահում: Դիրքագետ վարդապետը ֆրանսերէն լեզուով շնորհակալութիւն յայտնեց, իսկ ներկայ գտնվող քաղաքացիներից պ. Ստեփան Գեղեցիկանց իր ճառի մէջ այն յայտնեց, որ եպիսկոպոսը օգտակար կը համարուի կազմակերպելու հայ-կաթոլիկ հոգևոր վարչութեան հարցերը:

ՔԱԼԻՇ գիւղից (Էջմիածնի գաւառ) մեզ հաղորդում են. «Մեր Թալիշ գիւղի անցեալ երեք տարիների պտղի ցորենները, իւրաքանչիւր տարվան իր ժամանակին, մեր գիւղի տեղ-կարգապետ Սիմէոնեանի ձեռնով ուղարկեցինք Վաղարշապատ, որ այնտեղի պաշտօնեայ—միջին, մարդը յանձնէ Էջմիածնի շտեմարանին. 1900 թուին 12 սոմար, 1901 թուին նոյնպէս 12 սոմար, իսկ 1902 թուին—8 սոմար, որի մասին այժմ տեղեկանում ենք, որ իբր թէ այդ 32 սոմար ցորենից մի բուն անգամ չէ մտել Էջմիածնի շտեմարանը: Դժուարանում ենք հուսաւորու:

ԼՈՒՈՒ գաւառի ԴՍԵՂ գիւղից մեզ գրում են. «Մայիսի 27-ին, երեկոյան ժամը չորս ու կեսին, Դեղ գիւղը իր բոլոր այգիներով, ցորենի արտերով և պտղատու ծառերով ենթարկվեց ընտելեան սարսափելի պատժին. կարկուտը փչացեց գիւղացու տանները: Կարմաւով արեւն ջրտնկի աշխատանքը: Կարկուտը մեծութիւնը ընկողի չափ էր. նա տեսեց թռչունները բռնել: Արտերից գիւղացու յայտնեց յետոյ տեղացի նաև յորը անձին, գիւղի ժողովրդներով գետեր էին հոսում, շատ աներ ջրով լցվեցին. կանանց ու երեխաների լաց ու կոծից, մարդկանց աւ ու վախից լսող սիրտը կտոր-կտոր էր լինում: Փողոցներում տեղ-տեղ հեղաթմբեր են գոյացել հեղեղից: Վնասը շատ մեծ էր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱՅԱՆ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Անդ փոթորիկն անցաւ Սերբիայի վրայից և այժմ ժողովուրդը անհամբեր օգտուում է պայծառ արևի ծագելուն. սպասում է իր վարչապետի ազգային Դժուար է այժմանից որոշ գուշակութիւններ անել այդ ապագայի մասին, բայց եթէ յիշելու լինենք մօտիկ անցեալը, եթէ աչքի առաջ ունենանք սերբիական կառավարութեան նոր կազմն ու նորընտիր թագաւորը՝ Պետր Կարաճօրեւիչի արտասա-

նած խօսքերը, թէ նա միշտ ջերմ պաշտպան է իր ժողովրդի հանդէսը, ինչպէս զուտ ժողովրդական շահերի ու իրաւունքների, այն ժամանակ կարելի է երթալ ինքեղել է մի քանի շնորհ և գայլերու Յունիսի գրել, որ բարեբար փոփոխութիւն է կրելու 3-ին և 4-ին կրկին կարկուտ եկաւ, բայց այս Սերբիայի կեանքը, բարեբար՝ թէ կուտուրաւ, կան է թէ զուտ անտեսական տեսակէտից Գրաւաւաւաւ գրաւակներ կարող է լինել կուտուրաւ վարուելու նոր կազմը, որը և յիշատակու թեան կազմակերպողն էր նրա բոլոր անդամները պատկանում են առաջադիմական և արեւմտական կուտակցութիւններին Անա գրանց անունները:

Ի. Ավելի քան 10 օր է—մինիստր նախագահ, իրեւալ կուտակցութեան պարագլուխը, Նա մի քանի անգամ մինիստր է եղել և միշտ էլ հուսաւորում մնացել իր դաւանանքին: Նրա մինիստրութեան ամենամեծագուտ շրջանը 1893 թ. էր, երբ փոքրահասակ Ալեքսանդր թագաւորի հակառակման աղաւաղական ինտա-մակալութիւնը արձակեց ազատամիտ սկուպ-չինային, հրաժարեցից նոյն ուղղութեան պատկանող մինիստրներին և ստիպեց Ավելի քան մօլդիին նոր մինիստրութիւն կազմել, նոր ընտրութիւններ նշանակել: Սակայն ընտրվեցին զարեւալ արմատական կուտակցութեան կողմի նախկինները: Գործը այնպիսի սուր կերպարանք ընդունեց, որ նոյն իսկ արեւմտեան ընդհանուր լուծումը տեղի ունեցան: Այսպէս օրինակ, Գ. Բաշիչուս կատարված ընտրութիւնների ժամանակ օպանվեցին մօտ 30 արմատականներ: Կառավարութեան այդպիսի ընթացքը միանգամայն անհետարեց ժողովրդի հաւատն ու համակարգը: Սակայն հակառակման արդարական հոսանքը դրանով էլ չը բաւականացաւ: Գոհաւոր Միլանի դրամաթեր նրա դեռահաս որդին, Ալեքսանդր թագաւորը, 1893 թ. ապրիլի 1-ին ընթերցի հրաւիրեց Ավելի քան մօլդիին ու նրա ընկերակից մինիստրներին և շատախոսի բա-ժակը վերցնելով, յայտնեց, որ ինքն է ստանձնելու կուտակարութեան ղեկը, նոր մինիստրութիւն կազմելով, իսկ Ավելի քան մօլդիին ամբողջ մինիստրութիւնը այժմ նրա ընտանիքներին են: Այդ օրվանից անցան տարիներ: Ավելի քան մօլդիին մօտ չէր պետական գործերին, բայց մեծ յարգանք էր վայելում ժողովրդի կողմից, իբրև ազատամիտ ու կրթված մարդ: Իսկ այժմ նա նոր կառավարութեան ամենաազդեցիկ անդամ է դարձել:

Լ. Կալեվիչ—արտաքին գործերի մինիստր. դա նապրեդնեպցի (առաջադիմական) կուտակցութեան ամենապայտիկ անդամներից մէկն է և նշանակու է իր փորձառութեամբ:

Ս. Պրօտիչ—ներքին գործերի մինիստր. դա արմատական կուտակցութեան հիմնադրներից և տաղանդաւոր պատգամներից մէկն էր, իսկ Միլան թագաւորի համար ամենաատելի և արդէւ Բացի դրանից Պրօտիչ յայտնի է նաև իբրև շնորհալի հրապարակախօս: Երկար տարիներ նա արմատական կուտակցութեան օրգան «Објект» թերթի գլխաւոր խմբագիրն է եղել:

Ի. Ատանացի օվիչ—զինուորական մինիստր. յայտնի է իբրև լաւ զորավար: Նա բացառական կերպով յայտնեց իր ժամանակին, որ հակառակ է Ալեքսանդր թագաւորի և Դրագա Մաչինի ամուսնութեանը:

Լ. Ժիվկովիչ—արտարադատութեան մինիստր, լաւ ճառագետ և նշանաւոր իրաւաբան է: 1895 թ. նա մեղադրվում էր իբրև դաւաճար Մեյքլանդի թագաւորի դէմ: Դատարանում նա համարձակ կերպով չեղում է կոտաւարութեան վատ ընթացքը: Նա անսանձաւ ատելութիւն էր ցոյց տալիս դէպի Միլանը և ամեն մի դէպքում էլ արտայայտում էր այդ ատելութիւնը: Անա նուազու. ուսանողական մի կոնցրետի հրաւիրված է լինում և Միլանը: Ժիվկովիչը ներս մտնելիս հարցնում է, թէ որքան է նախընտրել նա և երբ պատասխանում են 500 դրամ, նա իսկոյն գրողանից հանում է 1000 դրամ և նուիրում: 1899 թ. նրան, իբրև կառավարութեան հակառակ մարդու, արտա-կարգ դատել են թարկեցին և տաժանակիր աշխատանքների դատապարտեցին...

Ժիվկովիչը առաջինն էր, որ սկուպչինայի նիստում յայտնեց, թէ Դրագա թագաւորն ձգտում է իր եղբորը թագաժառանգ նշանակել:

Լ. Ստօյիւս օվիչ—լուսաւորութեան մինիստր—երիտաւոր գիտնական, սերբիական ակադեմիայի անդամ Նա թէև չէ միջամտում քաղաքական գործերին, բայց համոզմունքով արմատական է:

Վ. Վելկովիչ—Ֆինանսների մինիստր.—Ժիվկովիչի գաղափարակիցն ու գործակիցն է: Նա թագաւորին և թագուհուն դիմադրող ծայրահեղ կուտակցութեան ամենաանախճուն անդամն էր վերջին սկուպչինայում...

Գ. Գենչիչ—Վաճառականութեան մինիստր. ուսուցական կրթութիւն ստացած մի երիտաւոր անձնաւորութիւն:

Ա. Մաչին—ճանապարհների հաղորդակցութեան մինիստր, յայտնի է իբրև կրթված զինուորական: Նրա եղբայրը սպանված թագաւոր Դրագայի առաջին ամուսինն էր:

Անա գրանք են սերբիական նոր կառավարութեան անդամները, դրանք են լինելու նորընտիր թագաւորի օգնականները:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Նոր-Չուրա, մայիսի 15-ին
Անցեալ օրերը տեղիս կենտրոնական զարուցում տեղի ունեցաւ ժողովրդական երեկոյթ, բաղկացած «Բռնի ամուսնութիւն» վոդեվիլից, մի քանի քառամասն ժողովրդական երգերից, մանկական թատրոնից, պարերից, կար և գրա-մօճօն, որպէս նորութիւն Սերբիայի բաւական աղոյ անցաւ, մասնաւոր երգերի կողմից: Վոդեվիլի մէջ պ. Մեղանը շատ լաւ խաղաց զօլտօրի դերը:

Վերջերս հաստատվել է այստեղ անտեսական ապառաժ մի ընկերութիւն, որի նպատակն է ապաստել հայ հասարակութիւնը պար-տիկ բախկանների կեղծումներից և թանգ ու զգվելի պաշարեղէնից, տարով նրան թարմ և մի և նոյն ժամանակ էժան մթերքներ: Ընկերութիւնը ցրվել է բաժնետոմսեր և արդէն սկսել է գործը: Յուշալի է, որ աղողութիւն գտնել, որովհետև այսպիսի մի ընկերութեան գոյութիւնը վաղուց արդէն պահանջ էր դա-նել մեղանում:

Նոյնաման մի ընկերութեան կարիք էլ զգացվում է հայերի մէջ երթնելով չարիքի հրէաների դէմ մրցելու և զորանց անկշտում հարստահարութիւնների առաջն առնելու հա-մար: Այդ չարիքի հրէաները բաւական մեծ թւով, ամեն օր Սպահանից գալիս են Չուրա, և ձեռք են առել համարեա տեղիս բոլոր ման-րավաճառութիւնը. նրանց թիւը չարթէ-չա-րաթի աւելանում է: Վաճառում են իրանց պատրաստած միտաքանալ զանազան կտորներ և ոսկեթել ժապաւեններ, թիւ, չիթ և այլն և այլն, իսկ թէ որքան են կողոպտում և կեղծ-թում խեղճ ժողովրդին, ասելն անգամ աւե-լորդ է:

Ամիս 7-ին Այվաթեան արաքանը Թէհրա-նից ժամանեց այստեղ և 11-ին մեծ հանդի-սով կատարվեց «Գէորգ Գանանեան» զարդի հիմնադրվելի հանդէսը: Թէև չինութիւնը բաւ-ական բարձրացել էր արդէն, սակայն արա-քանի բացակայութեան պատճառով օրհնու-թեան հանդէսը յետաձգվել էր:

ԱՐՏԱՔԱՆ ԼՈՒՐՆԵՐ

«Neue Freie Presse» լրագրի թղթակիցը թոյլտուութիւն ստացաւ այցելելու Դրագա թագաւորի ջոյրերին: Նրանց ամուսնացած ջրոյ-տիկին Պետրովիչն ասաւ: Թղթակիցը մտել է հիւրանոցներից երկու օֆիցերների ուղեկցու-թեամբ և մնացել է միայն մի քանի օր: Թագաւորը ջոյրերը հազել էին սև շորեր: Թղթակիցը հարցրեց, թէ ճիշտ է այն լուրը, որ իբր թէ թագաւորը ջոյրերից մէկը սպանված է:—Ոչ,—պատասխանեց տաղ ջոյրը,—պա-տահաբար մենք ամենքս ողջ մնացինք. ես աւազն եմ ընտանիքի մէջ. անա իմ կրտսեր ջոյրերն, իսկ այս երկու տղաները իմ որդիքն են:—Ինչու դուք տոտու էք պատասխաբար: Ձեզ վրանից էր սպանուում: Աւագ ջոյրը եր-կիւղով նայեց օֆիցերին և պատասխանեց.— Ես չեմ համարակցում խօսել այդ մասին: Մենք ամենքս ողջ մնացինք, բայց չնորհեա մի դէպքում.— Ես ոչ ոք ձեռնարկեց վիրաւորված չեմ:—Ոչ, պատասխաբար.— Միթէ դուք չեք հեռա-նայ Սերբիայից.— Մեզ չեն թողնում: Այն, եթէ մենք կարողանայինք հեռանալ: Այս խօսա-ճից յետոյ թղթակիցն ուղեկցող օֆիցերը ա-նաց. «Բաւական է, և տարաւ նրան Թղթա-կիցը հարցրեց Բէլգրադի կամենաւորին թա-գաւորը ջոյրերի ցանկութիւնը հեռանալու քա-ղաքից: Նա պատասխանեց. «Ժամանակը կը դաշ—կը հեռանան»:

«НОВОСТЫ» լրագրին հեռագրում են Վիէն-նայից. «Տեղեկութիւնը այն մասին, թէ Պետր թագաւորը իր սերբիական գահը բարձրանա-լու պայման է դրել աքսորումն այն բոլոր դե-նեարանների, գնդապետների և առհասարակ բո-լոր օֆիցերների, որոնք մտանկեղ են Բէլգրադի պաշտութիւններին, չէ հաստատուում: Սերբիական գահաժառանգութեան օրէնքի խախտման Պետր Ի-ի թագաժառանգը կատա-րելանալ կը ճանաչվի 21 տարեկան հասա-կում: Բէլգրադում տրուում է հանգստութիւն, որ չէ խախտվում ոչ մի արտաքին կարգի դէպքերից: Չորս տարուց յետոյ Պետր Ի թա-գաւորը, ինչպէս ասում են, մտադիր է հրա-ժարվել գահից յօգուտ իր որդու:

«НОВОСТЫ» լրագրին հեռագրում են Վիէն-

նայից. «Սերբիական սենատի փոխ-նախագահ Գէորգի հրաժարական տուեց: Գենեթալ-արիւ-տանա Պապովիչ և նրա հետ Կոստել, Գորիչ և Գանֆ օֆիցերները ուղևորվեցին դիմաւորելու թագաւորին ժընեվում ապրող սերբերը մի ուղերձ ներկայացրին Պետր Ի թագաւորին, որի մէջ ոգևորված կերպով ողջունում են նրա ընտրութիւնը:

«Information» լրագրի Գ. Պօլի թղթակիցը հաղորդում է, որ իբր թէ ապստամբված հա-յերի բազմութիւն հրոսակախմբեր կրկին երևա-ցել են Փոքր-Ասիայում: Հայերն աղողվեց հասնել Սասունի լեռները, ուր նրանք այժմ գտնվում են կատարեալապէս սպանով դրու-թեան մէջ: Նրանք միացան հայկական յայտնի պարագլուխ Անդրանիկի հետ: Սասունի փոք-րիկ ջոյրը ուժեղացնելու համար, որի նպա-տակն է պաշտպանել երկիրը թուրքական ճնշ-չումի դէմ: Թուրքաց կառավարութիւնը մեծ անհանգստութեան մէջ է Հայաստանում նոր հրոսակախմբեր երևալուց: Նա այժմ շատ վա-խենում է, մակեդոնական ճգնաժամի ժամա-նակ, հայերի յեղափոխական գործունէութեան նոր պայթումից:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

9 յունիսի
ՊԵՏԵՐԲՈՒԴ. Յունիսի 9-ին Ֆինլանդեան երկաթուղու Բայթօլօ կայարանում կայա-ցու Սերբիայի թագաւոր անուան եղբայրու-թեան ապաւարանի եկեղեցու օրհնութիւնը, որի մէջ խնամվում են լուսնոտ մանուկները և ապուշները:

Ներկայ ամառը ապրանքա-մարդատար շո-գենաւային կանոնաւոր հաղորդակցութիւն է հաստատվում Օդեսայի և Ֆինլանդական նա-ւահանգիստների միջև:

10 յունիսի
ՊԵՏԵՐԲՈՒԴ. Արտասանանից վերադար-ձաւ Մեծ Իշխան Ալեքսէյ Ալեքսանդրովիչ—Նշանակված է Մոսկովայի զինուորական շրջանի չրջանային ինտենդանտ գենեթալ-մայոր Պօլե-կով զինուորական մինիստրութեան գլխաւոր ինտենդանտի օգնական:

Բիւլի. Գաղաքը և գաւառն այցելեց Լօնդո-նից եկած աշխարհագրական ընկերութեան ան-դամ Գարրի Սոմերսէտ Լիստէր: Գալու նպա-տակն է ուսումնասիրել այն պայմանները, թէ որ չափով կարելի կը լինի կաթը փռչի վե-րածելու գործը:

ՀՈՒՄ. Անգլիական և իտալական դեպա-նութիւնների անդամները հեռացան Բէլգրա-դից:

ԼՈՒՐՈՒ. Համայնքների ժողով. Վիլիամ Ռէդ-մօնդ հարցնում է, թէ արդեօք բրիտանական կառավարութիւնը, մինչև դիպլոմատիական յարաբերութիւնների վերականգնումը Սեր-բիայի հետ, կը յայտնէ այն զգացմունքները, որ Մեծ Բրիտանիան տածում է վերջին սպա-նութիւնների առիթով և կը պահանջէ արդեօք կառավարութիւնը պատասխանատուութեան հա-թարկել յանցաւորներին: Բաղութը պատաս-խանում է, որ անկերպ անկարելի է որ և է առաջադրութիւններ անել Սերբիայի կառա-վարութեանը այն ժամանակ, երբ Անգլիան նրա հետ դիպլոմատիական յարաբերութիւններ չունի:

Կիւն. Միլայովովի վանքի կալուածքում մեծ իշխանական դարաշրջանի իրերի մի ար-ժէքաւոր զանձ է գտնվել: Նա կուղարկվի հնագիտական յանձնաժողովին Պետերբուրգ:

ԺԼՆԷՎ. Ուղևորվելուց առաջ Պետր թա-գաւորը դիմեց դաշնակցական խորհրդին և Ժընէվի կանտոնալ կառավարութեանը մի հե-ռագրով, որի մէջ շնորհակալութիւն է յայտ-նում հիւրանոց ընդունելութեան համար Շվեյ-ցարիայում:

ՍՈՅՈՒՆ. Նաչվիչ ունկնդրութեան ընդուն-վեց իշխանի մօտ: Առում են, որ իշխանը այն-քան էլ գոհ չէ Նաչվիչի միասնային հետևանք-ներից:

ԲԷԼԳՐԱՒ. Լուսնվից եղբայրների մարմին-ները, ազգականների խնդրելով, փոխադրված են հին գերեզմանոցը և թաղված են առհա-կան դամբարանում:

ՍԻՄԼԱ. Գենեթալ-մայոր Էդմոն, որը քա-լութիւններ գործեց Հնդկաստանի սանամա-գծային պատերազմներում, նշանակված է ար-չուանքի հրամանատար դէպի Սոմալիլանդ: 27-դ զենվական գունդը և 500 մարդ հետե-ւակներին հրաման ընդունեցին անյապաղ ու-ղևորվել Սոմալիլանդ:

ԴՄԱՐԱԳԻՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՆԱԲԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՌԱՌԱՅԻՆ ՏԳՐԱՆԵԱՆ ԻՍՏԱՆԱՅ ՄԷԼԻՔԱՆԱՍԱՆ

